

Վկադիմիր Մաղալյան

ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ «ԶԱՎԱԽՔ» ԹԵՐԹՈՒՄ

Բանալի բառեր. «Զավախք» թերթ, Հայկական հարց, Հայոց ցեղասպանություն, Հայոց դատ, լուսաբանել, ականատեսների հոդվածներ, անհերքելի փաստեր, պատմական նշանակություն:

Հայ գավառական մամուլի պատմության մեջ իր ուրույն տեղն ունի «Զավախք» թերթը¹, որի հրատարակության 100-ամյակը լրացավ վերջերս: Այս ուշագրավ պարբերականը, ասպարեզ իջնելով 1913 թ. հունվարի 12-ին, Զավախքի կենտրոն Ախալքալաքում, հրատարակվել է մինչև 1916 թ. մայիսի վերջերը²: Այդ ընթացքում թերթը կարողացել է իր շուրջը համախմբել գավառի լավագույն մտավորական ուժերին և նրանց աջակցությամբ լծվել տեղական հրատապ խնդիրների լուծման գործին: Այդ ամենի հետ մեկտեղ «Զավախքն» իր էջերում արծարծել է նաև համազգային նշանակություն ունեցող խնդիրներ, անդրադարձել է արևմտահայության ազգային-ազտագրական պայքարին, Առաջին աշխարհամարտի անցքերին և Անդրկովկասում դրանց ունեցած արծագանքներին: Թերթի մեկ տասնյակից ավելի բաժիններում իրենց մշտական տեղն ունեն «Բալկանյան պատերազմ», «Բարենորոգումներ Արևմտյան Հայաստանում», «Հայկական հարց», «Վերջին լուրեր», «Վերջին տեղեկություններ» և այլ ենթավերնագրերն ու խորագրերը, որոնց տակ գետեղված նյութերը նվիրված են հիմնականում Արևմտյան Հայաստանում ու Թուրքիայի հայաշատ բնակավայրերում տեղի ունեցած իրադարձություններին ու դրանց միջազգային արծագանքներին:

Զնայած «Զավախքի» հրատարակությունը 1915 թ. սկզբից պատերազմի ու այլ արգելքների հետևանքով մի որոշ ժամանակ ընդհատվել էր, բայց և այնպես, ուշացումով հանդերձ, նույն տարվա վերջերին լույս տեսած նրա 3 համարներում սեղմ կերպով ներկայացվել է Արևմտյան Հայաստանում թուրքերի կողմից կատարված ոճրագործությունների ընդհանուր պատկերը: Թերթի 1915 թ. հոկտեմբերին լույս տեսած երկրորդ համարը բացվում է «Ոճրագործություն է» առաջնորդող հոդվածով, որը գավառի ազգաբնակչությանն ուղղված համերաշխության ու համախմբման մի կոչ է: «Այսպիսի պատմական թուրքում, – կարդում ենք այստեղ, – երբ ամբողջ հայ ազգը մի հոգի, մի մարմին դարձած չի խնայում իր նյութականը, բարոյականն ու ֆիզիկականը, երբ մի կողմից Հայաստանի լեռները դղրդում են ռումբերի պայթյուններից, գնդակների սուլոցից, երբ աղեխարշ օգնության կանչերը մեր ականջներին են դիպչում, երբ հայի արյունն ու արցունքը ծովացել են և հայի տուն ու տեղի բոցն ու ծուխը աշխարհ է բռնել, դավաճանություն է մանր-մունր խաբկանքներով զբաղվելը և ամբարտավան ես-ին խնկարկելը»³: Թերթը նշում է նաև, որ այս «ազգային հսկայական պայքարի ժամանակ, երբ հասարակական կյանքը դուրս է եկել իր բնական սահմաններից», անհրաժեշտ է աչառու վերաբերմունք «կուսակցական նեղ հաշիվների, փոքրիկ թյուրիմացությունների» նկատմամբ: «Դրանք լուրջ մարդկանց կողմից պիտի չնկատվեն ու շուտ հարթվեն», – գրում է թերթը: Իսկ «երբ այդպիսի չնչին պատճառները կամ դեպքերը շահարկվում են որոշակի նպատակներով ու երբ փորվում են համազգային համերաշխության հիմքերը,

¹ «Զավախքն» ունի «Գրական-հասարակական շաբաթաթերթ» ենթանվանումը. ծավալը՝ 8 էջ, չափսը՝ 23x31 սմ, տպաքանակը չի նշված, տպարանը՝ Ախալքալաք, արագատիպ Մ. Գրիգորյանի: Նրա հիմնադիր ու հրատարակիչ խմբագիրը եղել է աչքի ընկնող լուսավորիչ և գրող, առաջադեմ հրապարակախոս ու հասարակական-քաղաքական, գրական-մշակութային գործիչ Վարդան Շահպարտյանը (1872-1941):

² «Զավախքը» առաջին տարում հրատարակվել է որպես շաբաթաթերթ, երկրորդ տարվանից դարձել է երկշաբաթաթերթ, իսկ 1915-ից սկսած տպագրվել է անկանոն պարբերականությամբ: Հրատարակության 4 տարիների ընթացքում ունեցել է ընդամենը 70 համար:

³ «Զավախք», հոկտեմբեր, 1915, № 2, էջ 9 (այսուհետև հղումները «Զավախք» թերթին կտրվեն տեքստում, փակագծերի մեջ՝ նշելով լույս ընծայման օրը, ամիսը, տարեթիվը, հերթական համարը և էջերը):

դա շատ ցավալի է, շատ տգեղ, եթե չասենք՝ դավաճանություն» (նույն տեղում, էջ 10): Թերթը կոչում է ազգի համար այդ ծանր պահին «գերծ մնալ անձնական գծուծ հաշիվներից, մի կողմ թողնել ես-ի պաշտամունքը, հին-հին կուսակցական մաքառումները» և համախմբվել ընդհանուր նպատակների շուրջն ու պայքարել դարավոր թշնամու դեմ: «Հայ աշխարհը երկունքի մեջ է, – ասված է այնտեղ, – հայոց լեռները տնքում են ցավից, Մայր Հայաստանի կրծքից արյուն է ծորում, իսկ մեր թշվառ ժողովրդի սուգն ու շիվանը բռնել է աշխարհը: Ի՛նչ ժամանակ է ամբարտավան սնափառության ու մեծամտության»: «Այժմ դրանց ժամանակը չէ, – գրում է թերթը, – այժմ անտանելի է, այժմ սրբապըղծություն է, անհանդուրժելի ոճրագործություն: Մենք պարտական ենք գլխներիս վրա պահել մեր դարեր փայփայած սրբություն սրբոցը, պարտական ենք խոնարհվել և ծունկ չոքել մեր թշվառ, բռնաբարված, զզգված և նահատակված հին գործի առաջ, պարտական ենք մեր քինախնդրությունը զսպել, մեր ամբարտավան եսականությունը մոռանալ և անդադրում գործել կամ՝ լռել», – կոչ է անում թերթը (նույն տեղում, էջ 11):

Թերթի նույն համարում տպագրված Վ. Այվազյանի «Նահատակների պատգամը» հոդվածը նվիրված է Արևմտահայաստանում թուրք բարբարոսների դեմ անհավասար պայքարի ելած քաջարի ֆիդայիներին, նրանց լուսավոր կերպարների հավերժացանը: «Մեզանից 1500 տարի առաջ, երբ զրադաշտները իրենց սուրը բարձրացրել էին քրիստոնյա հայ ժողովրդի վրա, – ասված է այնտեղ, – երբ պարսից գոռոզ շահը՝ արյունն աչքերը լցրած, երազում էր հայ ժողովրդի կործանումը: Ահա այդ պատմական պահին, այդ տագնապալից օրերին հայության սրտից դուրս է նետվում ազատության ու անկախության տենչանքներով վառված Վարդան Մամիկոնյան իշխանագն հերոսը: Նա իր շուրջն է հավաքում հայրենասեր հերոս մարտիկներին և ինքը՝ նրանց գլուխ կանգնելով, քաջին հատուկ հերոսությամբ դիմում է դեպի թշնամու գոռ բանակները՝ պաշտպանելու իր հայրենիքի սրբությունները, իր քույրերի ու եղբայրների պատիվը, հարազատներին գերծ պահելու բարբարոսների հալածանքից» (նույն տեղում, էջ 12): Ապա հեղինակը, համեմատության մեջ դնելով անցյալի ու իր ժամանակի նույն իրավիճակները, գրում է. «Ահա և այսօր, երբ մուսուլման տարրը նորից գենք է վերցրել քրիստոնեության դեմ, երբ անպատմելի հալածանք է սկսվել հայերի դեմ, երբ այդ տանջված ու բազմաչարչար ժողովուրդը՝ սարսափած թշնամու գազանային արարքներից, թողնում է տուն ու տեղ, փախչում է հայրենի եկրից իր կյանքը փրկելու համար, ահա և կարմիր Վարդանի արժանավոր ժառանգները հրապարակ են իջել այդ բարբարոսների վերջնական ջնջման մեծ գործին իրենց կյանքի զոհաբերմամբ մասնակից լինելու և դարավոր ճնշումից փրկելու Վարդանի Հայաստանը: Հայաստանի ազատագրման երկունքն է այս... Հազարավոր հայ կամավորականներ իրենց պանծալի խմբապետներով ուզում են կատարել դյուցազն Վարդանի մեծ պատգամը: Կեցցե՛ն նրանք» (նույն տեղում):

Նույն գաղափարներն են արժարծված նաև թերթի հիշյալ համարում տպագրված Վ. Շահպարտյանի «Վարդանանք» խորագրով ծավալուն հոդվածում (էջ 17), որտեղ հեղինակը վերհանել է 5-րդ դարի հայ ազգային հերոս «քաջ Վարդանի» ու Ավարայրի մյուս նահատակների սխրագործությունները ու կրկին ոգեկոչել նրանց անմարելի կերպարները:

Այս հրապարակումներով «Ջավախքը» անցյալի հերոսների օրինակով նոր սխրագործությունների էր կոչում 20-րդ դարասկզբի հայ ազգային-ազատագրական պայքարին անդամագրված մարտիկներին, որոնց շարքերում քիչ չէին նաև Ջավախք-Մեսիսթեթյան լեռնաշխարհի քաջարի գավակները:

Թերթի նույն համարի «Տեղական կյանք» բաժնից տեղեկանում ենք նաև, որ «ամսույս 29-ին (ամսանունը չի նշված, սակայն ենթադրվում է, որ դա եղել է հոկտեմբերի կամ նոյեմբերի 29-ին – Վ. Մ.) Արդվիհնի շրջանի Տանձոտ գյուղից 80 սահնակներով Ախալքալաք հասան 500-ի չափ գաղթականներ, բոլորը կանայք և երեխաներ, ամուսինները անխնայ կոտորված, որոնցից ազատվել են միայն 7 հոգի, նրանց թվում՝ Տանձոտ գյուղի ուսուցիչ, պ. Վարդան Մազմանյանը, որի ջանքերը սրանց ազատելու համար պսակվել է հաջողությամբ»: Ապա թերթը հայտնում է, որ «եկվորները ծայրաստիճան

չքավորության մեջ են, սրտաճմլիկ մի պատմություն, որը կարող է առասպելական թվալ շատերին» (նույն տեղում, էջ 18):

«Ջավախքը» հաջորդ` դեկտեմբերի 27-ի 3-րդ համարի առաջնորդում հայտնում է, որ «տպարանական անհարմարությունների պատճառով» գրեթե մեկ տարի թերթը չի տպագրվել: Լույս ընծայելով 1915 թ. վերջին համարը, խմբագրությունը խոստանում է վերացնել ցանկացած տեխնիկական արգելք և 1916 թ. թերթը հրատարակել կանոնավոր: «Սույն` 1915 թ. ընթացքում շատ չար ու բարի տեսավ մեր ժողովուրդը,– այնուհետև ասված է այնտեղ,– շատ արհավիրքների և զուլումների ականատեսը եղավ, որոնց թարգմանը պիտի լիներ «Ջավախքը», բայց մեզանից անկախ պատճառներով հնար չունեինք հրատարակելու, այժմ հույսով վերսկսում ենք նրա լույս ընծայումը և վստահ ենք, որ մեր հասարակությունը կաջակցի մեզ» (էջ 14):

Թերթի այդ համարը գրեթե ամբողջությամբ տալիս է 1915 թ. ցնցող դեպքերի ու իրադարձությունների մոտավոր պատկերը զավառում: Նրանում գետեղված նյութերից մեկը նվիրված է Ախալքալաքի Սուրբ Խաչ եկեղեցում նույն տարվա դեկտեմբերի 20-ին տեղի ունեցած հոգեհանգստյան ծեսին, որը կազմակերպել էին Տանձոտցի այրիներն ու ուսուցիչ Վարդան Սազմանյանն ի հիշատակ 1914 թ. դեկտեմբերի 17-ին իրենց գյուղում թուրքական յաթաղանով մորթված 167 նահատակների: Այս ցնցող ոճրագործության զոհերի տարելիցը նշելու առիթով վաղորոք հայտնվել էր քաղաքի ազգաբնակչությանն ու զավառի գյուղերից հրավիրվել էին քահանաներ: Դպրոցում սովորող գաղթական որբերին նույնպես եկեղեցի էին տարել, ուր մեծ թվով ժողովուրդ էր հավաքվել: Հոգեհանգստյան ծեսից առաջ հուզիչ խոսք է ասել դեպքերի ականատես, ուսուցիչ Վ. Սազմանյանը, հաղորդում է թերթը: Նա նկարագրել է այն սարսափներն ու տանջանքները, որ կրել էին տանձոտցիները տաճիկ զորքից ու տեղացի մուսուլմաններից: «Գրիչը անզոր է նկարագրելու այն, ինչ որ կատարվեց եկեղեցում,– գրում է «Ջավախքի» թղթակիցը,– այրիների լացը, որբերի մղկտոցը և զանգերի տխուր դողանջը սարսուռ էին ազդում ներկաների վրա: Բոլորը սկսեցին լալ, և խոսողը, չկարողանալով տանել թուրք բարբարոսների կտտանքների թողած զարհուրելի հիշողությունները, իր խոսքը ավարտեց լացով: Բոլորի սիրտը վրեժ էր պահանջում, վրեժ գազան թշնամուց» (էջ 18):

Արարողության ավարտին Համազասպ քահանա Տեր-Գրիգորյանի առաջարկությամբ եկեղեցում որբերի օգտին կազմակերպվել է դրամական հանգանակություն և հավաքված գումարը բաշխվել է նրանց:

Ասես Մեծ եղեռնի բոլոր զոհերի հիշատակին է նվիրված նաև նույն ծեսի առիթով գրված «Հա՛ս օգնություն ազգիս հայոց» սաղմոս հիշեցնող ներբողը, որը կրում է «Pessimist», ստորագրությունը: «Իր տունն ու տեղը մոխիր դարձած, հարազատներին արյունաթաթախ, կիսամեռ թողած, արյունուռուշտ մարդ-գազաններից մազապուրծ եղած հայ գաղթականն է մղկտում այդ աղերսագրում: Որքա՛ն անսպառ թախիժ, անհատնում վիշտ կա կուտակված այդ հեծկլտանք-աղերսի մեջ, դա մի հավիտենական թշվառության ազգային բողոք է... Ահա փախստականների մի փոքրիկ խումբ ծվարել է վանքի հեռու անկյունում ու այդ ամայի, անապատ աշխարհում, մարդկանցից կտրված, հառաչանքով ողբում է աղեխարշ երկտողը` «Հա՛ս օգնություն ազգիս հայոց»:

Հեղինակի հարցադրումը խոր վշտի ու թախծալի մտորումների տեղիք է տալիս: «Ապրե՛լ եք այդ սոսկալի թոպեն,– հարցնում է նա,– տեսե՛լ եք զարհուրելի տեսարանը, երբ ոչ մի հույս չկա ազատվելու, ոչ մի ձեռք չկա օգնելու, իսկ հրեշ թշնամին գլխավերև կանգնած` ուր որ է տանջանքների անօրինակ հանդես է սկսելու: Մահվան սոսկալի այդ թոպեին մարդկանցից ու աշխարհից հույսը կտրած, անհամար զոհեր տված հայը երկնքի Տիրոջն է ուղղում իր հայացքը ու վերևից, բարձրից է օգնություն խնդրում, ուրիշ էլ տեղ չկա, ուրիշ էլ մարդ չկա: Սակայն լուռ են եկեղեցու հաստ պատերը, խուլ են սառն քարերը, մռայլ ու համր են սրբերը: Եվ տեսարանն էլ ավելի ահավոր, հառաչն էլ ավելի սարսռեցնող է դառնում: Միջնադարյան անլուր արհավիրքների խուլ արձագանքն է լսվում այդ մեղեդու մեջ, տեսնում են անօգնական հային եկեղեցում ծվարած, զետնատարած մղկտում և երգում է. «Հա՛ս օգնություն...»: Ահավոր, շատ ահավոր է տեսարանը, տխուր, շատ տխուր` մեղեդին (էջ 18-19):

Եվ ահա քսաներորդ դարում էլ, սրի ու հրի երախից մագապուրծ հայը նորից եկեղեցում՝ մոմը ձեռքին, տնից-տեղից գրկված, որբի ձեռքը բռնած հեկեկում է. «Հա՛ս օգնություն ազգիս հայոց»: Դարերի վիշտն է քամվում նրա արնոտ սրտից, հայի դարավոր հալածանքի մորմոքն է դուրս թռչում նրա ակեկոծ հոգուց: Ու չի լսվում Տիրոջ ձայնը, չի գալիս «Ահեղ դատաստանի» օրը, հայոց եկեղեցում այրվող մոմերը խավարը չեն փարատում, վշտերի շտեմարան աղոթարանի հաստ պատերը դուրս չեն թողնում այդ հառաչը... Բայց մրմնջում է հայը կրկին յուր միակ հույսի մեղեդին՝ «Հա՛ս օգնություն ազգիս հայոց» (էջ 19):

Ի լրումն այս ծանր տեսարանի, թերթը ներկայացնում է նաև «Տարեվերջին» վերտառությամբ հաշվետվությունը, որի մեջ ասված է. «Թաց աչքերով ու վշտոտ սրտով ճանապարհ ենք դնում 1915 թվականը, այդ արյուն-արցունք տարին»: Ինչ սարսափներ, արհավիրքներ ասես, որ չբերեց մեզ այդ չարաբաստիկ թիվը: Շշմեցնող, վիատեցնող դեպքերի թիվն այնքան մեծացավ, որ կարծես ամեն ինչ կորցրած մարդու նման այլևս տխրել, ողբալ, դժգոհել անգամ չէինք կարողանում: Չէ՞ որ ամեն բան կորցրինք, չէ՞ որ տարիներ շարունակ մեր ոգևորության առարկան ամայացավ, անապատ դարձավ, մտածում էինք մենք՝ էլ ի՞նչ ավելի վատ բան կարող էր լինել: Բայց հայ ժողովրդի անօրինակ հալածանքը, տաճիկ քայքայվող պետության գազանաբարո վարմունքը ամեն տեսակի չարությունից անցավ: Յուր թուլության, ոչնչացման օրհասի ժամին այդ անբուժելի «հիվանդ մարդը» յուր թույնը անգեն, անպաշտպան հայ ժողովրդի գլխին թափեց: Աշխարհում դեռ նմանը չեղած բարբարոս կոտորածը նույնիսկ եվրոպական չեզոք պետությունների ատելությանն ու դատապարտությանը արժանացավ: Անգլիայում, Ամերիկայում, Շվեյցարիայում, Իտալիայում բողոքի, զայրույթի հսկայական միտինգներ եղան. հանգանակության գործը կանոնավորեցին, ու մեր երկիրը լցված բազմահազար գաղթականության անհատնում ցավերը դարմանեցին» (էջ 19):

«Բայց որքան քիչ են այդ օգնությունները այն մեծ աղետի առաջ, – գրում է թերթը, – որին ենթարկվեց հայ ժողովուրդը: Մի՞թե դրանով կարելի է կենդանացնել այն հազարավոր մանուկներին, որոնց սրախողխող արին կամ ջուրը նետեցին: Մի՞թե փողով կվերջանա, կամոքվի կնոջ կամ որդուն կորցրած հոր վիշտը: Չէ՞ որ մեր վիշտը փողով չի ամոքվի: Եվ մինչդեռ ընդհանուր լքում կար մեզանում, մինչդեռ շատ ղեկավար գործիչներ «Հայաստանն առանց հայության» էին հայտարարում: Սակայն, հակառակ այդ ամենի, գավառի գյուղացի հայ ժողովուրդը գլուխը կախ իր եղբայրական օգնության գործն էր անում: Նա շատ հեռու է մեր կարծեցյալ դիպլոմատների խոսելացավից, նա չի սիրում, երբ գործ կա անելու՝ դատողություններ տալ, ծրագրեր կազմել, սրան-նրան մեղադրել: Նա աշխատանքի հարազատ գավակն է ու միշտ, հավատարիմ իր կոչմանը, գործ է անում: Հարկավոր է օգնել՝ օգնում է, պետք է պաշտպանել ու տեղ տալ՝ պաշտպանում ու տեղ է տալիս» (նույն տեղում):

Այնուհետև թերթը վկայակոչում է այն օգնությունները, որ Ախալքալաքի գավառը ցույց է տվել աղետյալներին, իր ջանադիր աշխատանքով, իր ջերմ վերաբերմունքով դեպի թշվառության զոհ իր հարազատները, վերջ է տվել հուսահատությանը, լռեցրել ավելորդ, անտեղի դատապարտությունները, տեղ է տվել գաղթականներին, զոհաբերել է իր աղքատիկ ունեցվածքը և իր հացի վերջին պատառը սիրով կիսել է իր հարազատ եղբայր գաղթականների հետ: Ներկայումս էլ գաղթականների մի զգալի մասը ապաստանել է գավառի գյուղերում ու Ախալքալաքում, – գրում է հեղինակը, – և մեր գավառը չնայելով իր նյութական ծանր դրությանը, չնայելով թանկությանը, դարձյալ օգնության ձեռք է մեկնում անպաշտպան գաղթականներին:

Գավառն է, որ լավ ապագայի խոր հավատն ունի ու հուսահատվել չգիտե, գավառն է, որ իր քրտնաջան աշխատանքով ավերակը կենդանացնում է նորից, անապատը մարդաբնակ դարձնում, օջախի մարած կրակը նորից վառում:

Գավառն է մեր մեջ դժվարությունների ու արհավիրքների ասպարեզ ստեղծել, բայց և նա է ամենից առաջ իր անսպառ ուժերը լարել, նա է Հոբի համբերությունն ունեցել՝ քանդվածը վերաշինելու»: Հեղինակը, եղերական տարվա իր դառն հաշվետվությունն ավարտելով, վերջում հավելում է. «Գավառի այդ դիմացկուն, ոչ թե խոսող,

այլ գործ անող ժողովրդի մեջ եմ ես տեսնում Հայության ապագայի լավ գրավականը»։ Ծանր տխրության մեջ ահա այսպիսի լուսավոր հավատով ու հույսով էլ «Ջավախքը» մտնում է իր գոյության չորրորդ տարեշրջանը։

Նրա Ամանորյա համարը «Աստօժ հրաշափառ ծննդյան տոնը», «Քրիստոնեության արշալույսի տարեդարձը», որոնցով ամբողջ քրիստոնյա աշխարհը պիտի հրձվեր, ավետում է խորին տխրությամբ։ «Չէ՛, չենք կարող ասել» վերտառությամբ առաջնորդողում թերթը տարակուսում է. «Արդյոք գմբեթների վրա բարձրացող խաչերը ամեն տարվա պես պիտի մեզ ժպտա՞ն, թե՞ իրենց մռայլ քառ-թևերը պարզած պիտի ողբան։ Այո՛, պիտի ողբան,– վշտով գրում է թերթը,– որովհետև այժմ քրիստոնյա աշխարհում համատարած հեծկլտանք է, որ հնչում է, այժմ անհուն վիշտ է, որ պատել է, այժմ անսահման թախիծ է, որ պարուրել է մեր հոգին։ Ի՞նչ հրձվանք, ի՞նչ բերկրանք, երբ մի մեծ ավետարանական ազգ, իրեն առաջնորդ ունենալով Ներոնի նախանձը շարժող մի Ներոն՝ հանձին Վիլիելմի, համաշխարհային կրկեսում գլադիատոր պետություններին մարտի հանելով՝ իրար է մորթոտել տալիս ու հրձվում» (1916, № 1, էջ 1)։ «Ի՞նչ տոն,– շարունակում է թերթը,– երբ նույն նոր Կալիգուլան իր տաճարների վրա բարձրացող խաչերի վերև տնկել է արյունոտ կիսալուսինը և նրա զազիր գործակցությամբ միլիոնավոր մարդկանց գերեզմանն է փորում և աշխարհն արյան մեջ լողացնում։ Այո՛, այժմ փայլում է մի նոր տեսակի տևտոնական խաչ, որի վերևից կարմիր կիսալուսինն է, որ իր ժպիրի դեմքով հեզնում է սուրբ գաղափարը և հեզնում մեր անսահման վիշտը» (նույն տեղում)։

Այսպես, «Ջավախքը» շարունակում է իր Ամանորյա տխուր մտորումները, որ «արդեն փշրվել են հավատն ու հույսը, բիրտ ոտքերի տակ տրորվել են մեծ մարդկանց վեհ գաղափարներն ու քարոզները, բիրտ ուժն է, որ կոշտ ձեռքերով բռնել է իրավունքի և արդարության կոկորդից ու խեղդամահ է անում նրանց»։ «Իսկ մե՞նք,– շեշտում է թերթը,– մեր թշվառ, ծվատված, ճղակտոր, նահատակ խեղճ ազգը, մե՞նք, որ ոչ միայն դարավոր մեր ոսոխ թյուրքից, քյուրդից, ջուլդից ենք ոտնատակ, այլև մեզ հետ վիճակակից, մեզ հետ եղբայր, մեզ հետ դարեր ճնշված ու լլկված հարևանից էլ ենք անարգված։ Եվ այս բոլորից հետո պիտի ասենք՝ Շնորհավոր ծնունդ... Ո՛չ, չկա մեզ համար ծնունդ, որովհետև արցունքի ծովի մեջ ենք լողում, չկա շնորհավորանք, որովհետև արյան ալիքներն են մեզ լիզում, չկան մեզ համար գեղեցիկ տաղեր՝ որովհետև մեր մայրերի, մեր քույրերի, մեր որբերի սրտահույզ մղկտոցն ու նվոցն է, որ մեր լսողությունն է խտտեցնում, այս տարի սուգն է մեր բաժինը, այս տարի ողբն է մեր ընկերը և շիվանը մեր ալելույը...» (էջ 2)։

Թերթն իր առաջնորդողում չի մոռանում մերկացնել նաև եվրոպական տերությունների անտարբեր վերաբերմունքը Հայոց Մեծ եղեռնի նկատմամբ։ «Այժմ մենք իսկական ավետարանի հետ նորը պիտի ընդունենք և աշխարհի ընտրած շավղով գնանք,– գրում է նա,– Այժմ փոխանակ սիրո, եղբայրության՝ ճանկներս պիտի սրենք և այս վեհ գաղափարների ծննդյան տարեդարձին պիտի ուխտենք, որ թեև մենք միամտորեն դարեր շարունակ խաչը կրծքներիս ձգտել ենք դեպի Եվրոպան, գուրգուրել վեհ գաղափարները և նահատակվել, բայց այժմ նույն քրիստոնյա Եվրոպայի հանձարի ծնունդ մահառիթ անոթներով բնաջինջ ենք եղել և մեր սուրբ հայրենիքը գերեզմանի է վերածվել։ Դրա համար պետք է մենք էլ պաշտենք գայլի սուր ժանիքը ու գազանի բիրտ ուժը» (էջ 4)։

Իսկ մեկ այլ հոդվածագիր՝ Տ. Տերունին, իր «Գաղթականները Ախալքալաքում» հոդվածում նշում է, որ քաղաքը լի է թշվառ գաղթականներով։ «400-ից ավելի գաղթականներ կան այնտեղ,– գրում է նա,– որոնք մեծ մասամբ Տանձոտցի, Արդահանցի ու Ռաբատցիներ են, անցյալ տարվա խուճապից ազատված, ներկայումս ապրում են նեղվածք ու խարխուլ տներում։ Ամեն մի սենյակում, ուր կարելի է միայն 3-4 հոգի տեղավորել, ապրում են ավելի քան 12-16, նույնիսկ մինչև 20 հոգի», «Օրինակ, մի սենյակում տեղավորված են 20-ից ավելի մարդիկ, որոնցից 13-ը ծխական դպրոցում սովորող գաղթական երեխաներ են, որոնք այդպիսի թշվառ պայմաններում կարողանում են պատրաստել իրենց դասերը» (էջ 6)։ Հատկապես ծանր է 6-7 տարեկան դպրոցական երեխաների վիճակը, որոնք շրջում են զգզված հագուստներով, հաճախ օրերով հացի

երես չեն տեսնում, կարոտ են տաք թեյի, խարխափում են մթության մեջ, այս ծյուն-ծմռան սառնամանիքին չունեն փայտի մի ծեղ, քնում են թաղիքների ու չուլերի մեջ փաթաթված» (նույն տեղում):

«Ախալքալաքը լի է այդպիսի թշվառ գաղթականներով,— ավելացնում է հեղինակը,— նրանց ծով կարիքներին, տեղական հայությունը իր միջոցների ներածին չափով բավարարություն է տալիս, բայց դեռ դրանով չի բուժվում հիշյալ թշվառների խորունկ ցավը: Օգնության գլխավոր պարտքը դարձյալ ընկնում է մեր հայաշատ կենտրոններում եղած ընկերությունների ու մարմինների վրա, չնայած այն բանի, որ Ախալքալաքի գավկոնը և Կովկասի ՀԲԸ մասնաճյուղը աշխատում են, որքան հնարավոր է ապաստան գտած գաղթականներին հաց, վառելիք և այլ կենսական պիտույքներ հայթայթել: Սակայն դրսի օգնության կարիքը շատ անհրաժեշտ է,— գրում է նա ու վերջում ավելացնում,— որ այդպիսի ծանր ու աննկարագրելի պայմանները նրանց դարձրել են կմախքներ» (էջ 6):

«Ջավախքի» հաջորդ համարում ևս արծարծվում են հայ ժողովրդին վիճակված կնճռոտ խնդիրները՝ հնագույն ժամանակներից մինչև Մեծ եղեռնի օրերը: «Ո՞վ է մեղավոր» խորհրդանշական խորագիրը կրող հոդվածը նվիրված է հայ ժողովրդի անցած հերոսական ուղուն: Հեղինակը՝ խմբագիր Վ. Շահպարտյանը, անդրադառնալով հայ ժողովրդի անցյալի հարուստ պատմությանը, նշում է. «Չնայած դարեր շարունակ տեղի ունեցող աշխարհակործան ցեղերի արշավանքներին, կոտորածներին ու դժոխային պայմաններին, դիմացել է, և երբ քիչ թե շատ դադարել են այդ ցեղերի կործանարար արշավանքները, մոխիրների տակից նորից առկայծել է հայ օջախի կրակը, բարգավաճել է հայ կուլտուրան և հայ փոքրիկ ժողովուրդը ոչ թե մտել է անհայտության մեջ կորած ազգերի շարքը, այլ փայլել է յուր ուրույն փայլով, որոնց վկաներն են Բագրատունիների Շիրակն ու Այրարատը, Ռուբինյանների Կիլիկիան... Այժմ էլ՝ թեև վեց հարյուր տարի ձմլվել է մոնղոլական կիսավայրենի ու մոլի ցեղերի գարշապարի տակ, թեև քարուքանդ են եղել նրա տնտեսությունը, նրա շեն քաղաքները, նրա կրթարան վանքերը, թեև կորել անհայտացել են նրա արհեստն ու արվեստը, բայց վերջին դարերում, թեև արյունաքամ, վիրավոր, դարձյալ կռթնելով իր տոկուն կամքի վրա, գլուխ է բարձրացրել ավերակների միջից և ուզում է կանգնել, ուզում է տեր լինել իր հայրենի օջախին, իր կուլտուրայի ծուխը մխացնել և իր վրայից շարտելով ապօրինի կենակից խուժադուժ մոնղոլ հորդաներին ու ապրել մարդավայել կյանքով» (1916, N 2, էջ 9):

Ապա նա կանգ է առնում թուրքական հալածանքների վրա, ոգևորվում է նոր ժամանակների ազգային գործիչներ Ղավիթ Բեկի և Իսրայել Օրու մաքառումներով, Աբովյանի, Նալբանդյանի, Գամառ-Քաթիպայի, Ռաֆֆու, Ծերենցի, Խրիմյան Հայրիկի, Ալիշանի, Արծրունու և ուրիշների ստեղծագործություններով, որոնք «արցունքներ էին քանում» հայի աչքերից և հայոց սրտի հուրը բորբոքում ու նրան պայքարի էին կոչում «իրեն դարերով ձնշող ու ստրկացնող թուրքերի դեմ» (նույն տեղում, էջ 10):

Ապա ասպարեզ են իջնում այս հսկայածավալ գրական գաղափարախոսությամբ դաստիարակված սերունդները, որոնք վերացականը վերածում են գործնականի, ականջ շոյող երգն ու տաղը, ոգևորող վեպն ու պատկերները տեղի են տալիս ու նրանց տեղն արդեն կանգնում են գործի մարդիկ, որոնք «գրքի փոխարեն» գրկելով զենքն ու զրահը, արցունքը փոխարինելով արյունով, սկսում են իրենց նվիրական գործը: «Եվ դուրս եկան հերոսների շարքեր,— ավելացնում է հեղինակը,— զանազան Փորթուգալյաններ, Նագարբեկյաններ, Քրիստափոր Միքայելյաններ, Սիմեոն Ջավարյաններ և շատ ուրիշներ, որոնք մեկ Տաճկահայաստան դժողքում, մեկ Եվրոպայում անընդհատ թափառելով, անդուլ գործելով՝ նոր Հայաստանի հիմքերն էին պեղում, սպասելով որմնադիրների՝ հայկական պատվարը կանգնեցնելու... Եվ չուշացան այդպիսիները, իրար ետևից կուռ շարքերով առաջ եկան պանծալի մարտիկներ, իրենց ինքնամոռաց վեժ գործերով, անձնագոհությամբ պատկառանք ազդեցին շրջապատին... իբրև առյուծներ, իրենց մռնչոցով դղրդացրին Պոլսից մինչև Վան, Ջեթունի բարձունքներից մինչև Սասուն: Ո՞վքեր էին Կուկունյանները, Մուրադները, Սերովբեները, Հրայրները, Ղարա Դումանները, Անդրանիկները, Քեռիները, Եփրեմները, Դրոները և Համազասպները. մի-

մի ոյուցագուններ, որոնք ուզում էին իրենց թույլ ուժերով կտրել յոթը գլխեան վիշապի գլուխը, որոնք իբրև նոր Ղափիթներ, իրենց պարսատիկով ուզում էին ջախջախել գազիր Գողիաթի գլուխը... Եվ ընկան իրար ետևից մարտիկների շարքեր, նորերը եկան այս անհավասար կռվում, բայց իբրև մի հեքիաթական հրաշք, իրար ետևից դուրս էին գալիս խղճուկ, ծվատված ազգի ծոցից նորերը ու նորերը... Եվ կռվում ու կոփվում էր ազատագրման գործը, ստեղծվում էր Հայկական դատը. մեր հասարակական գործիչները մարտիկների հետ միասին անդուլ ու անդադրում ազգային մեծ դատի հիմքերն էին ամրացնում» (նույն տեղում):

Սակայն հողվածագիրը միաժամանակ գտնում է, որ փոշոտ է եղել նրանց ճանապարհը, տատասկոտ՝ գործը, նույնիսկ «խնդուկների անտառով ծածկված անդաստանը», որտեղ թունոտ օձերը սողալով հայ նահատակների շուրջը, իրենց թույնն էին թափում հիդրայի ճանկերից արյունաքամ ու զգզված մարտիկների ու նրանցով ոգևորվող ժողովրդի վերքերի մեջ, որոնք անասելի տանջանքներով տանում էին իրենց խաչը: «Եվ ի՞նչ վկաներ են պետք այս պանծալի գործին,– հարցնում է նա և անմիջապես էլ պատասխանում,– եթե վկաներ են պետք, ուրեմն թող խոսեն Գում-Գափուի դեպքերը, Սասունի հերոսական մաքառումները, Ջեյթունի բարձունքներին թառած մի բուռ արծիվների սխրագործությունները, թող պատմեն ձեզ հազար ու մեկ դեպքերում ընկած նահատակների սուրբ շիրիմները: Թող իրենց մռայլ կամարները բանան բանտերը և ցույց տան անլուր արհավիրքների կայան թուրքական զնդաններում հայ գործիչների տառապանքի մեջ մարտիրոսացած կմախքները, թող իբրև վկայության կոթողներ ցնցվեն ճոճացող կախաղանները, թող իրենց մահաշունչ նվոցով ձեզ պատմեն Արաբական անապատներում ցրիվ եկած հայ տարագիրների փտած ոսկորները լիզող խորշահար հողմերը» (նույն տեղում):

«Եվ այս հերոսների մեղքն այն է,– կոչում է հեղինակը,– որ, մոռացած իրենց բարօր կյանքը, նետվել են արցունքի ծովը խեղդվելու՝ ազատելու համար մեր ազգի բեկորները» (նույն տեղում, էջ 11): «Բայց կան անպատկառ մարդիկ, կան հասարակական և գրական ցածր գործիչներ,– ավելացնում է նա,– որոնք գործի ժամանակ կծկված գրասենյակներում իրենց անասնական պահանջներին բավարարություն տալու համար են մտածում, բայց երբ արտաքու դավաճանական արարքներից անհաջողության է մատվում մեր սուրբ գործը, իրենց կռվոցն են բարձրացնում իբրև տաքուկ ճահճից ցեխի տարափով ուզում են մեր չնաշխարհիկ գործիչների հմայքը նսեմացնել և նրանց անաղարտ պատիվը ցեխոտել: Այդպիսիների ճակատին պիտի դրոշմել Քսու անունը և գոչել՝ հեռո՛ւ սուրբ գործից» (նույն տեղում): «Եթե պիտի դատապարտվի մեկը, դա ինքը հայ ժողովուրդն է,– եզրակացնում է հեղինակը,– որովհետև անխտիր ազգովին բոլորս ոգևորված ուզում ենք թռչել ազատության բարձունքները, որովհետև բոլորս ազգովին մի սիրտ, մի հոգի դարձած, թե մեր գրքերով, թե մեր երգերով, թե մեր հոգով ու զգացմունքով միայն ազատություն էինք զոչում ու Հայկական դատի սուրբ դրոշակն էինք հյուսում, որովհետև վաթսուն տարի է, որ հայ մեծատունը, հայ գեղջուկը, հայ գրագետը ու հայ արհեստավորը միայն այս է կրկնել:

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի, որ յուր ազգի
Ազատության կը զոհվի:

Եվ եթե այս բոլորից հետո դարձյալ կասենք, որ դատապարտելի է,– շարունակում է թերթի խմբագիրը,– ուրեմն այրեցեք մեր բոլոր գրքերը, կտրեցեք մեր ոգեշունչ բանաստեղծների քնարի լարերը, քանդեցեք մեր սրբությունները, լռեցրեք հայկական լեռներում հնչող մարտիկի գոռ երգը ու միայն հետո ձեռնեցեք մեր սուրբ նահատակների խնկելի շիրիմները... Այո՛, եթե պետք է դատապարտել, ուրեմն պոկենք մեր տենչացող հոգին ու զգայուն սիրտը ու ոտներիս տակ տրորենք, կոխկռտենք մեր վեհ գաղափարները, պատռտենք մեր պաշտամունքի առարկա նվիրական դրոշը և ապա միայն ձեռնենք մեր անձնագոհ գործիչների հիշատակը և իսկական հայ հայդուկի գործերը» (նույն տեղում, էջ 10-11): «Ո՛չ,– մերժում է հեղինակն ու շարունակում,– Մեզ

համար պաշտելի է մեր սուրբ գործը, մինչև անգամ պաշտելի հայ գործչի անդադրում դեպքումնից մաշված կրունկը և անհայտ դաշտերում ընկած հայդուկի հողմածեծ, փտած ոսկորը... Եթե մասունքներ են պետք, հավաքենք այդ սրբությունները, եթե անձնագոհության օրինակներ են պետք, վերհիշենք նրանց գործերը, եթե ապագա սերնդին են պետք, հաղորդենք նրանց կտակները, իսկ եթե մի մեծ ողբերգություն է պետք, աչքի առաջ բերենք մեր խեղճ ու կրակ նահատակ ազգի դարերի ընթացքում կրած տառապանքն ու տանջանքը» (էջ 11): «Այո՛, այս բոլորով պիտի հպարտանանք և ոչ թե ամաչենք» (նույն տեղում):

Մենք Վ. Շահպարտյանի՝ թերթում տպագրված այդ համակողմանի դասախոսությունից ընտրողաբար վկայաբերեցինք որոշ հատվածներ, ցույց տալու համար Հայկական հարցի լուսաբանման կողմնորոշումները «Ջավախքի» էջերում: Նույն թեմայով գրված հետագա բոլոր նյութերը ևս վերհանում են եղեռնի մռայլ պատկերները: «Ջավախքի» հրապարակումներից աչքի են ընկնում և ընթերցողի վրա իրենց խոր ազդեցությունն են թողնում նաև «Pessimist»-ի հեղինակած «Խաչի սերը» (1916, № 2, էջ 13-14), «Արցունքի սով» (1916, № 4, էջ 26), «Կարդացե՛ք, անպայման կարդացե՛ք» (1916, № 5, էջ 34-35) և այլ նյութեր: Օրինակ, վերջինիս մեջ ներկայացված է մի դեպք, թե ինչպես Սասունից դեպի Կովկաս փախչող հայ գաղթականների մի խմբում, որն անտառում ընկնում է թուրքերի ծուղակը, «մի մայր իր երկու թնփլիկ զավակներին, որոնք երկու օրվա քաղցածությունից աղիողորմ լալիս էին, տալիս է մի տղամարդու, որ «լռեցնե», այլապես նրանց լացի ձայնից թշնամին կիմանար իրենց տեղն ու բոլորին կկոտորեր: «Դահիճը» մոր ներկայությամբ իր մատներով սեղմում է այդ մանուկների կրկորդները և երկուսին էլ ընդմիջտ «լռեցնում»: Մայրը ձայն անգամ չի հանում, իսկ հեռվում տների մեջ այրվող հայերի ճիչերը, ծուխն ու բոցն էր բարձրանում ո՛վ գիտե թե ուր...» (էջ 34): Ահա այսպիսի շատ ցնցող տեսարանների նկարագրությունների ենք հանդիպում թերթի հիշյալ տարվա համարներում տեղ գտած նյութերում, որոնց հեղինակները մի կողմից ներկայացնում են Մեծ եղեռնի թողած սարսռազդու հետևանքները, մյուս կողմից՝ ամբողջ հայ ժողովրդին և բոլոր աղետյալներին կոչ են անում՝ դիմակայել այդ ամենին, հավաքել կենսական ուժեր և սկսել նոր կյանք՝ հուսալով զալիք լավ օրեր:

Ախալքալաքի ազգաբնակչությունն իր օգնությունն ու աջակցությունն էր ցույց տալիս Ջավախք հասած գաղթականների քարավաններին: Թերթի այդ օրերի հրապարակումներից տեղեկանում ենք նաև որք երեխաներին օգնելու և նրանց կրթության ու դաստիարակության գործը զավառում կարգավորելու մասին: Դրանցում խոսվում է այն հանգանակությունների ու օգնությունների (հագուստ, սննդամթերք, գրենական պիտույքներ, վառելիք և այլն) մասին, որ ցույց է տրվել զավառի դպրոցներում սովորող որբ ու անապաստան երեխաներին և ընչազուրկ գաղթականներին:

«Ջավախքի» նույն տարվա մարտի 12-ի համարում տպագրված «Անհրաժեշտ է» առաջնորդողում խմբագիրը հիշեցնում էր, որ «մի քանի օրից սկսվելու են գարնանային վար ու ցանքը, որով և կտրոփե փախստականների սրտերը՝ հիշելով իրենց արտն ու արոտը»: «Եվ այսօր Ախալքալաքում ապաստանած Տանձոտցիները, այսինքն՝ որբ-կայրի կանայք և մանրուք երեխաները պատրաստվում են վերադառնալ իրենց վաթանը» (№ 4, էջ 25): «Սակայն մեզ՝ շրջապատողներին,– գրում է հեղինակը,– մի միտք է տանջում, թե ի՞նչպես պետք է ապրեն այդ թշվառները առանց տղամարդու, չէ՞ որ կինը ընդունակ չէ ամեն տեսակ աշխատանքի և չէ՞ որ այդ ժողովուրդը և պետք է բազմանա, վերաշինե ավերակները և ապագայում էլ հայ օջախի ծուխը ծխացնե» (էջ 25-26): Դրա համար թերթն անհրաժեշտ է համարում քաղաքում և հայ գյուղական շրջաններում արժարժեղ, որպեսզի որբ-կայրի տղամարդիկ և երիտասարդներ, ով որ հնարավորություն ունի, ամուսնանա տանձոտցի այրի կանանց և օրիորդների հետ և նրանց հետ գնա Տանձոտ»: «Միայն գործնական միջոցը այս է,– շարունակում է հորդորել թերթը,– որով թե այդ թշվառները հնարավորություն կունենան իրենց արտն ու այգին մշակելու և թե ապագայումն էլ Տանձոտը շենացնելու: Այս միջոցը անհրաժեշտ է և պետք է»,– ավելացնում է թերթը: Այս հարցի արժարժումը ժամանակին եղել է մարդասիրական մի

անհրաժեշտ քարոզ՝ ազգը կործանումից փրկելու, ընկածներին ու վհատվածներին ոտքի կանգնեցնելու, հույս ներշնչելու և հայրենիքը կրկին շենացնելու համար:

Ինչպես նախորդ երեք տարիներին, այնպես էլ 1916 թ. «Ջավախքը» ուշի-ուշով հետևում էր Առաջին աշխարհամարտի Կովկասյան ռազմաճակատի կարևոր իրադարձություններին: Թերթի տարեմուտի առաջին իսկ համարում պատերազմի մասին տպագրված ընդարձակ հաղորդագրության մեջ ներկայացված են կարևոր թվեր ու փաստեր: Բացի այդ, Մ. Մինասյանի հեղինակած «Պատերազմը և Ախալքալաքի գավառը» ծավալուն հոդվածում խոսվում է այն կարևոր միջոցառումների մասին, որոնք ձեռնարկվել են այդ հեռավոր գավառում ռազմաճակատում կռվող զինվորներին օգնելու ու սատարելու համար: Թերթը նշում է, որ 110.000 բնակչություն ունեցող Ախալքալաքի գավառը հեռվից-հեռու պատերազմին մասնակցում է իր մարդկային և նյութական ռեսուրսներով, հարյուրավոր ախալքալաքցի զինվորներ են մարտնչում նրա տարբեր ռազմաճակատներում: Սակայն «եվրոպական հրդեհը քանի գնում, այնքան ավելի ու ավելի է տարածվում, բռնկվում և կարծես ձգտում ամբողջ աշխարհը հրդեհի ճարակ դարձնել» (էջ 6-7): Պատերազմական այդ թեժ օրերին թերթն իր փետրվարի 14-ի համարում հայտնում է, որ «պատմության մեջ ցույց տված եզակի քաջությամբ հինգ օրվա ընթացքում գրավվեց Փոքր Ասիայի բանալի Էրզրում ամրությունը: Վհատված հայության համար այդ լուրը ավելի քան խրախուսելի ու ոգևորող է», – գրում է թերթը: – Ի՞նչ խուռն մտքեր, ի՞նչ սիրուն երազներ են այժմ ամեն հայի հոգում փոթորկվում: Դարավոր ստրկության հրեշավոր շղթան է ջարդվել, հայի արյուն-արցունքի աղբյուր ժայռն է խորտակվել: Հյուսիսի արծիվը իր ուժեղ թափով ազատության ձիթենին է տարել Բարձր Հայքի վրա ամրացրել: Տանջված, վտարված հայության վերածնության արշալույսի ցուրթերն են երևում, արևելքը կարմրել է, բոսորային գույնն ամեն տեղ բռնել, մոտ է արևի ծագումը» (նույն տեղում, № 3, էջ 17):

Սակայն, ցավոք, հայոց երկնականարում «արևը չի ծագում», այդ ընթացքում աշխարհում տեղի են ունենում ռազմաքաղաքական տեղաշարժեր, հեղափոխություններ, որոնց արդյունքում այնքան դժվարությամբ ազատագրված Էրզրումը դավաճանաբար կրկին հանձնվում է թուրքերին: Այդպես մարում են հայ ժողովրդի Արևմտյան Հայաստանն ազատագրված տեսնելու բոլոր հույսերը: Սա երկրորդ ուժգին հարվածն էր հայությանը՝ Մեծ եղեռնից անմիջապես հետո: Դրանից շուրջ երկու ամիս անց «Ջավախքը» ապրիլի 9-ի համարում Ջատկական տոների առթիվ գրված «Ամենայն ինչ կատարյալ է» առաջնորդողում հայտնում է հետևյալը. «Վերջապես դարերի ընթացքում արծարծված Հայկական հարցը լուծվեց, այժմ Հայաստանում անդորրություն է և այսօր, այս հրաշալի օրերում, երբ պետք է միմյանց շնորհավորենք Քրիստոսի հարությունը, եվրոպական դիպլոմատիան ամենայն սառնասրտությամբ պիտի ասե. «Վերջապես այլևս ազատ ենք նենգ գործելակերպից, որովհետև Թյուրքահայաստանում այժմ ամենայն ինչ կատարյալ է, հայ ժողովուրդը սպառ-սպուռ ջնջված է և միայն խաղաղ գերեզմանները ու անթաղ դիերն են, որ փռված են այդ անհանգիստ երկրում: Այլևս կարիք չկա գառան մորթի հագնելու, այլևս կարիք չկա կոկորդիլոսի արցունք թափելու և նենգ դիվային ժպիտով նրանց վիրավոր հոգին ձեռնելու... Ամենայն ինչ կատարյալ է... Թող սրանից հետո տանջված ու քերթված հայ նահատակների գերեզմանների վրա իրենց բախտավորությունը հիմնեն դավեր սարքողները: Թող ծովից մինչև ծով տենչանքի ծրագրերը իրագործվեն և գայլական ավետարանի պատգամները կատարվեն: Այլևս Հայաստանում անդորրություն է, այլևս չի լսվում ողբ ու կական, այլևս անհանգիստ հայերը չեն ցնցում մեր և իրենց նրբազգաց հարևանների ջղերը... Այլևս բռնաբարված հայ կույսի, լլկված հայ մանուկների աղիողորմ կանչը չի վրդովե շրջապատին և բոլորս հանգստացած կարիք չենք ունենա արդարացնելու ու սքողելու մարդ-բորենիների արարքները...» (№ 5, էջ 33):

Ջատկական այս տոները հայության համար չեն, խոր վշտով գրում է թերթը, քանի որ անմահ վարդապետի պատգամները խաչվել ու ոտնատակ արվել, եղբայրության ու սիրո նրա քարոզները ծաղրվել են ու մի ամբողջ ժողովուրդ չարաչար տանջանքներով խաչվել ու թաղվել է, էլ ի՞նչ սրտով մարդկային խղճի հարությունը տոնել: Միայն պիտի

մորմոք սրտով ողբալ, որ մարդիկ գազաններ են, ցավով նշում է թերթը, և անգթության աշխարհում միամիտ է նա, ով տոնում է այս տոնը, նշում Աստծո պատգամների այս փառահեղ օրերը (էջ 34): Թերթը ցավով է նկատում, որ աստվածային այս տոնի օրերը դարձել են բորենիների ու գայլերի խըրախճանքի օրեր, և դևերի ու բվերի բերկրալի դարաշրջանն է սկսվել: «Արյունն է հոսում, դիակներն են նեխվում, լլկված, տրորված հայ կնոջ ու մանկանց հեծկլտանքն է լսվում, ամայի Հայաստանի լեռներում միայն նահատակների սգավոր թմբերն են երևում,— գրում է «Ջավախքը»: — Եվ այսպիսի օրերում Հարությունը տոնելը, մարդկային հոգվո ազատությունը փառաբանելը հայության համար չէ» (էջ 34): «Մեզ համար տոն չէ այս,— գրում է թերթը,— մեզ միայն պետք է տուկունություն, համբերություն և անդուլ աշխատանք, որ քանդածը նորոգենք, գերեզմանների շուրջը սփռված որբերին խնամենք, հայ բեկորները ի մի հավաքենք ու հապա մեր տոնը տոնենք» (նույն տեղում):

Սրանով «Ջավախքը» ավարտում է իր եղեռնապատում նյութերի շարքը: Նրա հետագա միակ համարում, ճիշտ է, դարձյալ շոշափվում է այդ թեման, սակայն դրանք արդեն առանձին դատողություններ ու արձագանքներ են տեղի ունեցած զարհուրելի կոտորածների, Արևմտյան Հայաստանը հայաթափելու և արևմտահայությունն աշխարհով մեկ սփռելու վերաբերյալ: Ախալքալաքի գավառը ևս այդ ժամանակ ապրում էր դժվարին օրեր, պատերազմական գործողությունները տեղի էին ունենում նրա սահմանների մոտ ու սպառնում հայաբնակ այդ երկրամասին ևս: Ստեղծված տագնապալի իրավիճակում, նյութական սուղ պայմաններում, 1916 թ. մայիսի 20-ի 6-րդ համարի տպագրությունից հետո դադարում է նաև գավառահայ այդ սիրված թերթի հրատարակությունը:

Այսօր մեզ ուղիղ մեկ հարյուրամյակ է բաժանում «Ջավախքի» առաջին համարի լույս ընծայումից: Սակայն գրադարաններում ու արխիվներում պահպանվող նրա թերի հավաքածուները շատ բան են պատմում մղձավանջային այն ծանր օրերի մասին, երբ աշխարհում մոլեգնում էր Առաջին աշխարհամարտի փոթորիկը և նրա թանձր ծխի սև շղարշի տակ հայ ժողովուրդն ապրում էր իր մեծ ու անասելի ողբերգությունը: Այդ նույն օրերին տպագրվող «Ջավախքը» դատապարտում էր արևմտահայության զանգվածային տեղահանություններն ու կոտորածները, բողոքի իր ձայնն էր բարձրացնում Ջավախքին ու Մեսխեթին սահմանակից, սակայն Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայկական տարածքներում կատարվող բարբարոսությունների դեմ, մերկացնում Օսմանյան կայսրության հայաջինջ քաղաքականությունն Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայախիտ բնակավայրերում, միաժամանակ անարգանքի սյունին էր գամում եվրոպական մեծ տերություններին՝ այդ ոճրագործությունների նկատմամբ դրսևորած իրենց քար լռության համար:

Այդ թերթն Առաջին համաշխարհային պատերազմի շրջանում լուսաբանել է նաև Կովկասյան ճակատում տեղի ունեցող ռազմական գործողությունների ընթացքը և ներկայացրել Հայոց Մեծ եղեռնի մի շարք զարհուրելի տեսարաններ պատկերող լուրեր ու թղթակցություններ:

«Ջավախք» թերթի հրապարակումների ուսումնասիրությունը մեզ բերում է այն համոզման, որ այդ պարբերականը չէր կարող այլ կերպ լինել, քանի որ Ախալքալաքի, Ախալցխայի ու Ծալկայի հիմնական ազգաբնակչությունն էր գրումի վիլայեթից դրանից շուրջ ութսուն տարի առաջ տեղահանված հայեր ու հույներ էին, որոնց սրտերում դեռ չէին մարել «էրզրի» կարոտը և, Արևմտյան Հայաստանի ազատագրման առաջին իսկ պահից նրանք պատրաստ էին վերադառնալու իրենց պապենական սրբազան բնակավայրերը:

Այդ լրագրի դերը մեծ է եղել նաև Սամցխեի, Ջավախքի ու Թեղքի գավառներում վերաբնակեցված հարյուր հազարից ավելի հայության նոր սերունդների մեջ իրենց հայրենի եզերքի նկատմամբ ունեցած սիրո ու կարոտի զգացմունքներն արթուն պահելու և ազգային-ազատագրական պայքարի հուրը երիտասարդության սրտերում բորբոքելու գործում: «Ջավախքի» այդ հրապարակումները ցարդ չեն կորցրել պատմական վավերագրեր լինելու իրենց արժեքը և կարող են Հայոց Մեծ եղեռնի մոտալուտ դարալիցի օրերին միջազգային հանրությանը վերստին հիշեցնել անցյալ դարասկզբին Օս-

մանյան կայսրությունում հայ ժողովրդի նկատմամբ կիրառված ցեղասպանությունը: Այդ մասին են վկայում նրա էջերում տպագրված բազմաթիվ նյութերը, որոնք ժամանակին գրվել են ականատեսների կողմից և անհերքելի փաստեր են պարունակում արևմտահայությանն իր հայրենի հողում բնաջնջելու վերաբերյալ: Դրանք ներկայումս էլ նույն ուժով դատապարտում են սրանից հարյուր տարի առաջ կատարված, բայց երբեք վաղեմության ժամկետ չունեցող այդ մեծ ոճրագործությունը:

Владимир Магальян, Освещение геноцида армян в газете «Джавакх». В статье представлена деятельность выходившей в 1913-1916 гг. в г. Ахалкалаки газеты «Джавакх», которая освещала не только социально-экономические, общественно-политические, культурно-просветительские проблемы уезда, но и с особым вниманием обращалась к состоянию армянского населения Западной Армении в период Первой мировой войны, резко осуждала массовые депортации и резню армян турецкими варварами, равнодушие и неопределенность позиции мировых сверхдержав того времени. В работе впервые обсуждаются материалы, большая часть которых написана очевидцами, от чего их историческая ценность резко возрастает.

Ключевые слова: газета «Джавакх», Армянский вопрос, геноцид армян, освещать, статьи очевидцев, неопровержимые факты, историческое значение.

Vladimir Maghalyan, The Elucidation of the Armenian Genocide in the Newspaper “Javakhk”. The article elucidates the activity of the newspaper “Javakhk” (1913-1916) published in Akhalkalaki from 1913 to 1916. The paper not only focused on the social and economic, public and political, literary and cultural life of the province, but also referred to the unbearable and severe conditions Western Armenians lived in, in the period of World War I, condemned mass deportations and massacres of the Armenian population in Ottoman Turkey. It also pilloried the powerful European countries for their indifference and shaky position in the solution of the Armenian Case and the Armenian Genocide. Most of the materials published in “Javakhk” are actually referred to and discussed in the present article for the first time. The majority of them are eye-witness testimonies and contain undeniable facts of the extermination of Western Armenians. They have not so far lost their historical significance.

Key words: “Javakhk”, newspaper, the Armenian Cause, the Armenian Genocide, to elucidate, eye-witness testimonies, undeniable facts, historical significance.